

Վ. Դ. ԱՌԱՔԻՆՅԱՆ, ԱՆՆԱՐԿՆԵՐ ԲԱՅՈՋ զԵՐԿԱՆ ԼԵՂՎԻ պատմության (V դար), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 214 էջ:

Զնայած հայոց հին դրական լեզվի պատմության հարցերը վաղուց քննության առարկա են եղել, այնուամենայնիվ V դարի մեր գրական լեզվի պատմությունը կարոտ էր նոր ուսումնասիրության, մանավանդ որ բացակայում են հայոց լեզվի պատմության բուհական դասընթացին վերաբերող անհրաժեշտ գասագրքերը: Ահա այս բացը լրացնելու է գալիս պրոֆ. Վ. Առաքելյանի «Աննարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար)» աշխատությունը: Նախապես նշենք, որ Վ. Առաքելյանը, խուսափելով նախորդ ուսումնասիրողներին վերակրկնելուց, նորովի մոտեցում է հանդես բերել մեր հին շրջանի գրական լեզվի պատմությանը: Լեզվի նյութական կողմը համադրելով լեզվաոճական հարցերին՝ նա ստեղծել է V դարի գրական լեզվի պատմությանը նվիրված արժեքավոր մի աշխատություն:

Գրախոսվող աշխատությունը բաղկացած է երեք մասից՝ ընդարձակ ներածությունից և երկու գլուխներից: Գրական լեզվի պատմության հետ կապված ընդհանուր լեզվաբանական հարցերի մի բարդ կոմպլեքս է լեզվաբանությունը: Բաժինը ԽՆՀ Լ ուսումնասիրում գրական լեզվի պատմությունը: Այս հարցի մեկնությունը մեզ սկսվում աշխատությունում: Գրական լեզվի պատմությունն ուսումնասիրում է լեզվի զարգացման ներքին օրինաչափությունները, հնչու-նական համակարգի, բառապաշարի և քերականական կառուցվածքի փոփոխություններն ու զարգացումը, բնականոնացումը և այդ ընթացքում արտահայտչամիջոցների կատարելագործումը, գեղարվեստական, հրապարակախոսական, պաշտոնական և այլ գրականությունների լեզվի քննությունը, նշանավոր գրական հուշարձանների լեզուն և ոճը:

Վ. Առաքելյանը մերժում է բուրժուական լեզվաբանության՝ լեզվի թռիչքաձև, պայ-թյուններով զարգացման մասին տեսությունը, Մառի «ստատիկականության» վարկածը և ընդունում է մարքսիստական տեսությունը լեզվի աստիճանական ու անընդհատ զարգացման մասին, հիմնավորում է գրական լեզվի՝ համաժողովրդական լեզվի բարձրագույն ձև լինելը՝ համապատասխան փաստարկումներով ուրվագծելով գրական լեզվի զարգացումն ու զարգաց-ման գործընթացը: Աշխատության մեջ շեշտվում է գրական լեզվի կապը ժողովրդի պատմու-թյան և համաժողովրդական խոսակցական լեզվի հետ: Լեզվի զարգացման երկու միտումներ՝ ներքին բնական փոփոխությունը՝ մի կողմից, նոր բառերի ու արտահայտությունների առա-ջացումը, իմաստափոխությունը՝ մյուս կողմից, ձգվում են դեպի ժողովրդի պատմության խոր-քերը և պայմանավորվում ժողովրդի պատմության տեղաշարժերով: Գրական լեզվի բնորոշ առանձնահատկություններից մեկը կանոնիկությունն է, որը հարաշարժ երևույթ է և արտա-հայտվում է թե՛ հնչյունաբանության (մասնավորապես հնչյունափոխության), թե՛ բառապա-շարի և թե՛ քերականական կառուցվածքի մեջ: Այս մարզերում գրական լեզուն մերժում է այն բոլոր ձևերը, որոնք սխալ կազմություններ են, ուրիշ են իմաստային ճշտությունից, վայելուչ չեն, և, ընդհակառակն, ընդունում է այն ամենը, ինչ կանոնիկ է և համապատասխանում է տվյալ դարաշրջանի լեզվամտածողությանը: Վ. Առաքելյանը պատշաճ խորությամբ քննում է նաև գրական և խոսակցական լեզուների, գրական լեզվի ու բարբառների փոխհարաբերությունը, հայոց գրական լեզվի դորժառական ոճերը՝ առօրյա-խոսակցական, գեղարվեստական, գիտա-կան, հրապարակախոսական, պաշտոնական՝ նշելով դրանց բնորոշ առանձնահատկությունները: Գրական լեզուն, որպես կանոն, զարգանում է խոսակցական լեզվի զարգացմանը զուգընթաց: Սակայն բոլորովին այլ ճակատագիր ունեցավ V դարում սրբագործված մեր գրական լեզուն՝ գրաբարը: Նա հետագայում, իր մեջ լրեղգրկելով խոսակցական լեզվում առաջացած բառա-պաշարային շերտերն ու քերականական ձևերը և մնալով միևնույն մակարդակի վրա, կտրվում ու հեռանում է խոսակցական լեզվից՝ իր զարգացման հիմքից, և դառնում է մեռած լեզու՝ ղաղաբելով հաղորդակցման միջոց լինելուց:

Գրական լեզվի կարևոր հատկանիշներից մեկն էլ ժողովրդայնությունն է, որի շնորհիվ լեզուն ժողովրդականանում է՝ դառնալով մասսաների սկիզբնությունը։ Լեզվի ժողովրդայնությունը ամենից առաջ «ժողովրդական խոսքի նուրբ լեզվական միջոցների, դիպուկ ու գեղեցիկ, պատկերավոր արտահայտությունների հարստության յուրացումն ու մշակումն է» (էջ 43), որին մեծապես նպաստում են գրողներն ու բանաստեղծները։ Հրապարակախոսներն ու գիտնականները։ Բանավոր խոսքից մուտք գործելով գրական լեզու՝ ժողովրդական բաներն ու արտահայտությունները օգտագործելով են իրենց հորինելի պարզունակությունից, բարբառայնությունից և ձևեր են բերում պատկերավորություն, արտահայտականություն։ Ակնբախ է, որ գրական լեզվի հիմքը գիրն է։ Առաքելյանը համոզիչ փաստերով ուրվագծում է գրի դարգացման ճանապարհը՝ պատկերագրություն, գաղափարագրություն, վանկագրություն ու հնչյունագրություն, դրանք գիտելով իրեն գրի վարդապետան տարբեր աստիճաններ, համառոտ քննում է հայկական գրերի գյուտը, ժխտում է նախամեսրոպյան շրջանում հայերեն գրեր ու դպրություն և դառնում լինելու հավանականությունը և հիմնավորում այդ վեհ գործի մենաշնորհը երանելի Մ. Մաշտոցին պատկանելը։

Գրախոսվող աշխատության հետաքրքրական մասերից մեկը «Գրաբարը իբրև համաժողովրդական խոսակցական լեզու» խորագիրը կրող հատվածն է։ Այստեղ հեղինակը հավաստում է, որ V—XII դարերի ընթացքում գրաբարով գրված երկերի ընդհանուր բառապաշարը կազմում է շուրջ 80 հազար բառ ու նույնքան էլ դարձվածքային միավոր ու գտնում է, որ «գրաբարի բառապաշարը համահայկական հողի վրա է հարատևել և հարատևում է մինչև այսօր ու հնացման աննշան թիվ է կազմում։ Եվ եթե մենք խոսում ենք գրաբարից փոխանելու մասին, դա հենց վերաբերում է տվյալ հնացած բաներին» (էջ 63)։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրաբարը այնքան էլ պատենելի չէ եղել բարբառներից, Հայ առաջին թարգմանիչներն ու ինքնուրույն գրողները, հունական և ասորական կրթություն ստանալուց հետո Հայաստան վերադառնալով, այստեղ համակվում են գրական խոսքը ժողովրդին հասկանալի դարձնելու գործնական մտահոգությամբ։ Առաքելյանը գտնում է, որ V դարի գրական լեզվում գործածված, բայց քաղաքացիություն չստացած անմեկնելի շատ բաներ, դարձվածքներ, նույնիսկ ճերականական ձևեր ու հնչյունափոխական դրսևորումներ ունեն բարբառային ծագում։ Ուսումնասիրության հեղինակը անդրադառնում է նաև գրաբարի պատմության շրջաբաժանման հարցին, քննում հայ ճերականների կատարած շրջաբաժանումները և սրանց շարքում առանձնապես արժեքավոր ու ընդունելի է համարում Գ. Զահակյանի շրջաբաժանումը։ Առաքելյանը, առարկելով գրաբարի ավանդական շրջաբաժանման այն դրույթի դեմ, ըստ որի գրաբարի առաջին և երկրորդ շրջանների սահմանագիծ է դիտվում 460 թվականը, գտնում է, որ լեզվական շրջաբաժանումը մեկ տարով կամ նույնիսկ տասնամյակով չի կարող սահմանվել։ Այս սահմանադատումը պահանջում է պատմական խոշոր տեղաշարժեր, ընդարձակ ժամանակաշրջան և լեզվական ներքին լուրջ փոփոխություններ (էջ 90)։ Գրաբարի շրջաբաժանման հարցի պատմության մեջ առանձնապես հետաքրքրական է դասական կամ ոսկեդարյան հայերենի խնդիրը։ Պրոֆ. Վ. Առաքելյանը լեզվական համոզիչ փաստերով մերժում է V դարի լեզուն ոսկեդարյան և եռօսկեդարյան շրջանների բաժանման տեսությունը՝ այն դիտելով իբրև արհեստական բաժանում։ Նա նման եզրակացության է հանգում՝ առաջնորդվելով լեզվի պատմության շրջաբաժանման ժամանակակից տեսությամբ, որը լեզվական շրջաբաժանման սկզբունքներ է դիտում լեզվի կառուցվածքի ու գործառության փոփոխությունը և լեզվի պատմության ու ժողովրդի պատմության համապատասխանությունը։ Հայ ճերականագիտության պատմության մեջ տարակարծությունների տեղիք է տվել նաև V դարի ինքնուրույն ու թարգմանական գրականությունը ըստ ոճական հատկանիշների տարբեր դասերի բաժանելու հարցը։ Վ. Առաքելյանը կատարում է նոր դասակարգում՝ V դարի գրական հայերենով գրված երկերի լեզուն բաժանելով երեք դասի՝ ա) ժողովրդական կամ պարզախոս գրական լեզու, բ) գրքային կամ խրթնաբան լեզու և գ) միջին ոճի գրական լեզու։ Գրքում հանդամանորեն տրվում են այդ դասակարգման հիմունքը հանդիսացող լեզվաօճական հատկանիշները։

V դարի գրական լեզվի պատմությունը ամբողջացնելու նպատակով Վ. Առաքելյանը դարաշրջանի գրական լեզվի զարգացման լուսիի ներքո հանգամանորեն քննում է մեր մատենագիրների երկերի լեզվաօճական առանձնահատկությունները՝ տեսանելի դարձնելով յուրաքանչյուր մատենագրի անհատականությունը ինչպես իրականության արտացոլման, այնպես էլ

լեզվական արվեստի տեսակետից, նա մեր պատմագրության նշանավոր երկերի լեզուն և ոճը ցնեում է ձեռի ու բովանդակության սերտ միասնության մեջ, որը միանգամայն ճիշտ մոտենցում է, քանզի այդ ստեղծագործությունները V դարի հայ քերթողական հանճարի արտահայտած գաղափարների և դրանց դրսևորման լեզվական ձևերի յուրովի ամփոփումն են։ Վ. Առաքելյանը բացահայտում է յուրաքանչյուր մատենագրի լեզվին ու ոճին առավել բնորոշ առանձնահատկությունները, հստակորեն սահմանադատում մեր դասական գրական լեզուն կերտած մատենագիրների բառապաշարի շերտերը, իսկ սրանց շարքում՝ առավելապես հեղինակային նորարարությունները։ Ուշագրավ են հնչյունափոխության, բառակազմության, ձևաբանության ու շարահյուսության մարդերում գրական լեզվի կանոնիկ ձևերից մեր որոշ մատենագիրների կատարած տարարնույթ շեղումների վերաբերյալ գիտնականի դիտողությունները։ Այսպիսով, Վ. Առաքելյանը բացել է մեր դասական մատենագիրների հարուստ լեզվաաշխարհի խորհրդավոր դռները, բացահայտել լեզվաոճական այն դրսևորումները, որոնք կյանքի են կոչվել մեր մշակույթի առաջին երախտավորների կողմից։

Գրախոսվող աշխատությունը նաև զերծ չէ որոշ մասնակի թերություններից, նրանում առկա են փաստական մասնակի անճշտություններ, որոնք ստեղծում են տերմինների ոչ տեղին գործածություն։ Այսպես, տարբեր հասկացություններ արտահայտող ժառեր և ռե տերմինները հետևյալ նախադասությունների մեջ համարյա նույնացվում են. «Գեղարվեստական գրականության ոճերը նախ և առաջ բաժանվում են երկու հիմնական խմբի՝ առձայլի և շավաճոյի» (էջ 35)։ «Երեսն հերթին արձակ և չափածո ոճերը ենթարածանվում են արձակ բանաստեղծության, պոեմի ու քնարական բանաստեղծության, թատերգության ու առակի և այլ ոճերի» (էջ 36)։ Եզ. Կողբացու և Փ. Բուզանդի գործածած դարձվածքների շարքում հիշատակվում են նաև այնպիսի բառակապակցություններ ու հարադրություններ, որոնք դժվար է դարձվածք համարել. ինչպես՝ երկբի երես, աբդ ու զաբդ, մոտ գալ, խառա առլ, օդ ծծել, նշան առլ, հոգեառ դրախտ, աստուածապաշտութեան լուծ և այլն։ Սրանք զուրկ են դարձվածքին բնորոշ վերափոխարկումից։ Նույն ձևով Եղիշի բառապաշարի հնացած շերտի մեջ ներկայացվում են նաև այնպիսի բառեր, որոնք այսօր էլ գործածական են. ինչպես՝ դեռեանկողին, երկցեզ, կիսապաբզե, հոգաբայութ, սրաւեթիլ, քալաքգին, օտաւախոբ (էջ 195)։

Մենագրության մեջ արձանագրված որոշ փաստերի հետ դժվար է համաձայնել։ Դանիելյան նշանագրերի մասին կարդում ենք. «Դանիելյան նշանագրերը Հայաստան են բերվել Վուսթապուհի թագավորության 5-րդ տարում։ Այդ նույն տարին էլ Մեարոպը վերահասու լինելով, որ այդ այրուքներ պիտանի չէ հայերենի համար՝ Սահակի ու Վուսթապուհի թուլությունների մի խումբ աշակերտներ հետև առած՝ մեկնում է Ասորիք...» (էջ 51, ընդգծված մերն է—Ա. Կ.)։ Մինչդեռ Կորյունը վկայում է, որ դանիելյան նշանագրերի անօգտակարության մեջ Մաշտոցը համոզվում է դրանցով երկու տարի ուսուցումը տանելուց հետո։ Կամ՝ դանիելյան նշանագրերի՝ Հայաստան բերվելու մասին գրված է. «Մարդ է ուղարկվում Դանիելի մոտ նշանագրերը բերելու» (էջ 51)։ Գնացողը եղել է նշանավոր պալատական Վահրիճը, որի անունը, իբրև հայ գրի ու դպրոցի (նաև դպրության) ստեղծմամբ շահագրգռված անհատի, մեր կարծիքով, սույն աշխատության մեջ արժանի էր հիշատակության։

Այս թերությունները, ինչ խոսք, մասնակի բնույթ են կրում և նսեմանում են աշխատության խոր գիտականության ու համակողմանի վերլուծության հանդեպ։ Սույն ուսումնասիրությունը ունի նաև տեղեկատու նշանակություն. նրանում մեկնվում են գրաբարյան բազմաթիվ բառերի ու արտահայտությունների իմաստները, դրանց գործածության հաճախականությունը տարբեր մատենագիրների մոտ, ուրվագծվում է տարբեր բառերի կրած պատմական հնչյունափոխությունը, կատարվում է ճշգրտում գրաբարյան բազմաթիվ բառերի ու քերականական ձևերի մեկնության մեջ, ընթերցողին գաղափար է տրվում մեր մատենագիրների բառապաշարի մասին և այլն։

Վ. Առաքելյանի աշխատությունը ամփոփում է տեսական ու փաստական հարուստ նյութ մեր լեզվի պատմության, V դարի գրական լեզվի, մեր մատենագիրների լեզվի ու ոճի, ոճաբանության, լեզվի պատկերավորության ու արտահայտչականության միջոցների և այլ իրավությունների մասին։ Այն մեր գրական լեզվի գիտական համակարգված պատմություն է՝ V դարի կտրվածքով։ «Անկարկներ հայոց գրական լեզվի պատմության (V դար)» աշխատությունը ներգրում է հայոց գրական լեզվի պատմության ու ոճագիտության մեջ։